ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ

Թարմացված է 15.09.2023թ.

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
1.	Հակոբ Մարտիրոսյան	«Դիմում եմ ձեզ, որպեսզի անձնական տվյալներս հեռացնեք ԿԸՀ-ի կայքից (https://www.elections.am/Register)»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:»: Հետևաբար, Ձեր պահանջը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասության սահմաններում չէ:
2.	Վանատուր Շերենց	«Համաձայն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ, թե՝ 1. քանի արտասահմանցի է մասնակցել Երևանի ավագանու 2018 թ. ընտրություններին, 2. արդյո՞ք օրենսդրությամբ արգելվում է դիտորդին ներգրավվել 2 դիտորդական առաքելություններում, 3. օրենսդրությամբ դիտորդին արգելվու՞մ է ներկա գտնվել և դիտարկել կուսակցության կողմից վստահված անձանց վերապատրաստման դասընթացին:»:	Երևանի ավագանու 2018թ. ընտրություններին դիտորդական առաքելություն է իրականացրել մեկ միջազգային կազմակերպություն՝ թվով 4 դիտորդների կազմով: Երևանի ավագանու 2018թ. ընտրություններին արտասահմանցիների մասնակցության վերաբերյալ վերլուծված այլ տվյալներ առկա չեն: Անդրադառնալով հարցին առ այն, թե արդյո՞ք օրենսդրությամբ արգելվում է դիտորդին ներգրավվել 2 դիտորդական առաքելություններում, հարկ եմ համարում նշել, որ ընտրական օրենսդրության հիմքում ամենուրեք դրված է այն տրամաբանությունը, որ անձը չի կարող հանդես գալ ընտրական գործընթացում ավելի, քան 1 կարգավիճակով: Բացառություն է կազմում ընտրողի կարգավիճակը: ՀՀ ընտրական օրենսդրությունը մանրամասն անդրադարձ է կատարում ընտրական գործընթացում տարբեր կարգավիճակներով հանդես եկող մասնակիցների իրավական կարգավիճակին՝ նպատակ հետապնդելով ապահովել ամենալայն հրապարակայնությունը՝ այդ հարցում երաշխավորե-

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			լով հավասար հնարավորություններ մասնակիցների համար և հավասարակշռություն քաղաքական ուժերի համար: Այսպես, վերոգրյալով է պայմանավորված ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր քաղաքական ուժին քվեարկության սենյակում միաժամանակ մեկ կամ երկու (կախված ընտրությունների տեսակից) վստահված անձ ունենալու իրավունքը, յուրաքանչյուր տեղական հասարակական կազմակերպությունից մեկ դիտորդի, իսկ համատեղ դիտորդության դեպքում՝ երկու դիտորդների ներկայությունը և այլն: «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նշված կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:»: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման կարգը, հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և Հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դրանց ներկայացման կարգը, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այցելուների վկայականների ձևերը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի թիվ 3-Ն որոշմամբ սահմանված է դիտորդների հավատարմագրման և հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը, որի համաձայն՝ հավատարմագրման դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքով դիմող կազմակերպությանն ուղարկվում է՝ 1) համապատասխան գրություն կազմակերպությանը՝ հավատարմագրման հայտը հաստատվելու դեպքում.

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			2) Հանձնաժողովի որոշումը՝ հավատարմագրումը մերժելու դեպքում: Կազմակերպության հավատարմագրման դեպքում դիմումի ուղարկման էլեկտրոնային հասցեով կազմակերպությանն է ուղարկվում կազմակերպության օգտահաշիվը՝ կազմակերպության կողմից հետագա գրանցումներն իրականացնելու համար: Օգտահաշիվը թույլ է տալիս մուտքագրել հավատարմագրման համար ներկայացվող անձի տվյալները, փոփոխություններ կատարել այդ ցանկում և ինքնաշխատ կերպով ներբեռնել և տպել դիտորդներին տրվող վկայականները: Հանձնաժողովի համացանցային կայքում առկա համակարգը, որի միջոցով ներմուծվում են հավատարմագրվող դիտորդների տվյալները, իրազեկում է հասարակական կազմակերպությանն այն մասին, որ տվյալ անձն արդեն իսկ գրանցված է դիտորդի կամ թեկնածուի կամ հավատարմագրված լրագրողի կարգավիճակով: Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ «Հասարակական կազմակերպությունները կարող են հավատարմագրվել և դիտորդական առաքելություն իրականացնել համատեղ: Համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները կարող են հանդես գալ մեկ միասնական անվան ներքո: Համատեղ դիտորդության դեպքում հասարակական կազմակերպությունները ներկայացնում են հավատարմագրման վերաբերյալ համատեղ դիմում և դիտորդների համատեղ ցանկ: Եթե համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու համար դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից որևէ մեկը չի համապատասխանում սույն օրենսգրքի պահանջներին, ապա համատեղ դիտորդական առաքելություն իրականացնելու վերաբերյալ դիմումը մերժվում է միայն այդ կազմակերպությանը վերաբերելի մասով: Եթե դիմումի մերժման արդյունքով սույն օրենսգրքով

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			սահմանված պահանջներին համապատասխանում է միայն մեկ հասարակական կազմակերպություն, ապա այդ հասարակական կազմակերպությունը հավատարմագրվում է որպես առանձին դիտորդական առաքելություն իրականացնող:»: Ընտրական օրենսդրությունը չի կարգավորում կուսակցության կողմից վստահված անձանց վերապատրաստման դասընթացների վերաբերյալ հարցերը, ուստի, նշված հարցերը յուրաքանչյուր կուսակցության իրավասության ներքո են:
3.	Մելիք Մկրտչյան	«Բարև Ձեզ, Կներեք մի բան եմ ուզում ճշտել, առաջիկայում Երևան քաղաքում կամ Կոտայքի մարզում հնարավոր է լինել նոր մասնագիտական դասընթացներ, որպեսզի ընտրական հանձնաժողովի անդամի կամ տեխնիկական մասնագետի հավաստագիր կարողանամ ունենալ: Եթե կլինի նման դասընթացներ, կխնդրեմ ինձ ասել օրը, ժամը և վայրը: Կանխավ շնորհակալ եմ ձեզ: Կսպասեմ ձեր արձագանքին:»:	Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս պահին ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և տեխնիկական սարքը սպասարկող մասնագետների դասընթացներ չի կազմակերպում: Դասընթացներ կազմակերպելու պարագայում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am, կզետեղվի հայտարարություն, որում նշված ժամկետներում կկարողանաք ներկայացնել դիմում:
4.	Արեգնազ Բարսեղյան	«Բարև Ձեզ, ինչպե՞ս կարող եմ ընտրական տեղամասում աշխատել էլեկտրոնային ապարատների վրա»:	Տեղամասային ընտրական հանձնաժողովում ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումն սպասարկող անձանց դիմումների ներկայացման, ընտրված անձանց ուսուցման և մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների ստուգման կարգը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017թ. հունվարի 11-ի N 5-Ն որոշմամբ: Տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների նոր թեկնածուների հավաքագրման անհրաժեշտության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ դրա վերաբերյալ հայտարարությունը սահմանված կարգով կհրապարակվի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am:

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
5.	Վահան Գասպարյան	«Բարև ձեզ ես ընտրական հանձնաժողովում կարո՞ղ եմ մասնակցել որպես մասնագետ»:	Տեղամասային ընտրական հանձնաժողովում ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումն սպասարկող անձանց դիմումների ներկայացման, ընտրված անձանց ուսուցման և մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների ստուգման կարգը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017թ. հունվարի 11-ի N 5-Ն որոշմամբ: Տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների նոր թեկնածուների հավաքագրման անհրաժեշտության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ դրա վերաբերյալ հայտարարությունը սահմանված կարգով կհրապարակվի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am:
6.	Անահիտ Դեմիրչյան	«Կարճատև գործնական այցով ես և ամուսինս սույն թվականի սեպտեմբերի 13-ից 19-ը լինելու ենք Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում: Երկուսս էլ Երևանի բնակիչներ ենք և կցանկանայինք իրականացնել մեր քաղաքացիական պարտքը՝ սեպտեմբերի 17-ին մասնակցելով ՏԻՄ ընտրություններին: Խնդրում եմ մեզ տեղեկացնել, թե կարող ենք, արդյոք, Երևանի ավագանու ընտրություններին մասնակցել՝ գտնվելով Էստոնիայում, և ինչ կերպ:»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ քվեարկությունն անցկացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում ժամը 8.00-ից մինչև 20.00-ն: Ընտրական օրենսգրքի մեկ այլ կարգավորման համաձայն՝ քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոնում՝ դրա համար կահավորված դահլիճում, սրահում, սենյակում և այլ տարածքում: Հետևաբար, վերը նշվածը հաշվի առնելով, տեղեկացնում ենք, որ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար ընտրողը պետք է այցելի Երևան քաղաքում կազմավորված ընտրական տեղամասեր:
7.	Անդրանիկ Մանուկյան	«Բարև Ձեզ: Իմ Անունն է Մանուկյան Անդրանիկ Արմենի, ծնված՝ 05.12.1989թ. Մանթաշյան 5, Երևան: Երբ որոնում եմ կայքում իմ տվյալները, մեր հասցեի տակ բացի ինձնից և կնոջիցս կա նաև	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
		նախկին տան տերը, ով վաճառել է մեզ տունը 2016թ. և այդ ժամանակից այլևս չի ապրում ՀՀ-ում: Այս խնդրի մասին բազմիցս անգամ տեղեկացրել ենք ընտրատարածքներում և երբ նախնական ճշտումներ էին անում ընտրություններից առաջ: Պասպորտ սեղանում այդ մարդը չկա գրանցման ցուցակում, թէ որտեղի՞ց է հայտնվում նա այս ցուցակներում, ոչ ոք չի կարողանում պատասխանել: Խոսքը գնում է Պինա-Սևաչերյան Մարգարիտա Հակոբի մասին: Կարո՞ղ եք օգնել պարզելու այս խնդիրը: Կանխավ շնորհակալ եմ»:	ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ մարզերի և համայնքների: Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված և ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:»: Նույն Օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ «2. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: (…) 5. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Դիմումը պետք է պարունակի անհրաժեշտ հիմնավորումները, և դրան կից պետք է ներկայացված լինեն փաստական հանգամանքների ապացույցները: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեգիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:»: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, տեղեկացնում ենք, որ լիազոր մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է, հետևաբար, ընտրողների ռեգիստրում և առհասարակ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու հարցերով կարող եք դիմել լիազոր մարմին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			ծառայություն:
8.	Սյուզաննա Մուրադյան	«Բարև Ձեզ, հարգելի Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ինչպե՞ս կարող եմ արագացված ընթացակարգով (ցանկալի է առցանց) գրանցել իմ հասցեում բնակվող և գրանցված իմ դստերը՝ Մերի Գրիգորյանին (18տ.) և իմ հասցեում բնակվող, սակայն դեռ չգրանցված մայրիկին՝ Հասմիկ Բաղալյանին (74տ.) ԿԸՀ-ի ռեգիստրում, որպեսզի նշված անձինք նույնպես մասնակցեն առաջիկա ընտրություններին»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ «2. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: (…) 5. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացնելու լիազոր մարմին: Դիմումը պետք է պարունակի անհրաժեշտ հիմնավորումները, և դրան կից պետք է ներկայացված լինեն փաստական հանգամանքների ապացույցները: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում ընտրողների ռեգիստրում վերացնում է անճշտությունները՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով դիմողին:»: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, տեղեկացնում ենք, որ լիազոր մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է, հետևաբար, ընտրողների ցուցակներին վերաբերող բոլոր հարցերով կարող եք դիմել լիազոր մարմին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
9.	Արեգնազ Բարսեղյան	«Բարև Ձեզ: Ինչպե՞ս կարող եմ ընտրական գործընթացին մասնակից լինել»:	Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղեկացնում է, որ ընտրական գործընթացում ընդգրկված են տարբեր սուբյեկտներ: Քանի որ Ձեր հարցադրումից պարզ չէ, թե ընտրական գործընթացի ո՞ր սուբյեկտին է վերաբերում հարցը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հստակ պատասխանել չի կարող: Պատրաստ ենք պատասխանելու՝ հարցը հստակեցնելու դեպքում:
10.	Աշոտ Վերդյան	«Հարգելի ԿԸՀ ղեկավարություն: Ես և ընտանիքս 2020թ. նոյեմբերից բնակվում ենք Երևան քաղաքում, մինչ պատերազմը բնակվում էինք Շուշի քաղաքում: Սկզբում բնակվում էինք վարձակալական հիմունքներով, իսկ 2023թ. կառավարության օժանդակությամբ արտոնյալ վարկով ձեռք բերված սեփականության իրավունքով բնակարանում, որպես ՊՆ անմահացած սպայի ընտանիք: Աշխատում ենք Երևանում, վճարում հարկեր, ես՝ պետական կառավարման մարմնում, մյուսները սեփական: Ունենք ՀՀ անձնագրեր, հարց՝ մենք կարող ենք մասնակցել ընտրություններին, եթե այո ինչպե՞ս, շնորհակալություն»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝ 1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները. 2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված. 3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):»: Օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			կազմելու համար:»: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, տեղեկացնում ենք, որ լիազոր մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է, հետևաբար, ընտրողների ցուցակներին վերաբերող բոլոր հարցերով կարող եք դիմել լիազոր մարմին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:
11.	Սուսաննա Պետրոսյան	«Բարև Ձեզ ի՞նչպես կարող եմ դիմել ընտրությունների անկացման ժամանակ որպես տեխնիկական սարքավորմների մասնագետ աշխատելու դասընթացներին մասնակցելու համար: Համաձայն եմ նաև ընդգրկվել հանձնաժողովի կազմում: Խնդրում եմ ինձ ընդգրկել որևէ ազատ հաստիքում»:	Տեղամասային ընտրական հանձնաժողովում ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումն սպասարկող անձանց դիմումների ներկայացման, ընտրված անձանց ուսուցման և մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների ստուգման կարգը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017թ. հունվարի 11-ի N 5-Ն որոշմամբ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս պահին ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և տեխնիկական սարքը սպասարկող մասնագետների դասընթացներ չի կազմակերպում: Դասընթացներ կազմակերպելու պարագայում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am: Ինչ վերաբերում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելուն, ապա տեղեկացնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակում են՝ 1) Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները)՝ մեկական անդամ, եթե խմբակցությունների թիվը մեծ է 4-ից, և երկուա-

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			կան անդամ, եթե խմբակցությունների թիվը փոքր է 5-ից. 2) համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ 2 անդամ»: Տեղամասային ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու վերաբերյալ հարցը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասության սահմաններում չէ: Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամ նշանակելու իրավասությունը վերապահված է միայն Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) և համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
12.	Գարիկ Մինասյան	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հարգելի աշխատակիցներ, այս պահին ես գտնվում եմ Հոլանդիայում և ցանկանում են մասնակվել Երևանի քաղաքապետի ընտրություններին: Խնդրում եմ ինձ հայտնել՝ որտե՞ղ (ո՞ր քաղաքում) կարող եմ իրականացնել ընտրողի իմ պարտքը»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ քվեարկությունն անցկացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում ժամը 8.00-ից մինչև 20.00-ն: Ընտրական օրենսգրքի մեկ այլ կարգավորման համաձայն՝ քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոնում՝ դրա համար կահավորված դահլիճում, սրահում, սենյակում և այլ տարածքում: Հետևաբար, վերը նշվածը հաշվի առնելով, տեղեկացնում ենք, որ Երևանի ավագանու ընտրություններին մասնակցելու համար ընտրողը պետք է այցելի Երևան քաղաքում կազմավորված ընտրական տեղամասեր:
13.	Զավեն Մելիքյան	«Բարև Ձեզ, ես փաստացի գրանցված էի ինձ հանել են գրանցումից հիմա գրանցում չունեմ ո՞նց պիտի ընտրեմ, ու՞մ դիմեմ»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝ 1) մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացինե-

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			ը. 2) մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում չունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատազրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված. 3) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):»: Օրենսգրքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «2. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը: Լիազոր մարմինը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը սույն օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար:»: Ուստի, վերոգրյալով պայմանավորված, տեղեկացնում ենք, որ լիազոր մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է, հետևաբար, ընտրողների ցուցակներին վերաբերող բոլոր հարցերով կարող եք դիմել լիազոր մարմին՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն:
14.	Վահե Վանցյան	«Բարև Ձեզ, իմ մոտ առաջացել է խնդիր առաջիկա ավագանու ընտրություններին մասնակցելու, այն պատճառով որ իմ անձնագիրը գտնվում է Իտալիայի դեսպանատանը: Ի՞նչ լուծում կարող է լինել այս իրավիճակում»:	«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ի թիվս անձը հաստատող այլ փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ընտրողի համար անձը հաստատող փաստաթուղթ են համարվում նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը, ոչ կենսաչափական

Հ/Հ	ԴԻՄՈՂ	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ
			անձնագիրը, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից: Օրենսգրքի նշված կարգավորումից պարզ է, որ նույնականացման քարտը ևս համարվում է անձը հաստատող փաստաթուղթ և, եթե Դուք ունեք նույնականացման քարտ, կարող եք քվեարկությանը մասնակցել անձը հաստատող փաստաթղթի այդ տեսակով: Իսկ եթե նույնականացման քարտ չունեք, ապա, ինչպես սահմանված է Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասով, ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տեսակ է համարվում նաև անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը, որը տրվում է լիազոր մարմնի կողմից: Տեղեկացնում ենք, որ լիազոր մարմինը ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է, հետևաբար, անձնագրին կամ նույնականացման քարտին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայություն կամ տարածքային անձնագրային ծառայություններ: